ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

CENTER OF DEMOCRACY AND LAW NGO

ք.Երևան, Անդրանիկի փ. 76-18 Yerevan, Andraniki Str. 76-18 Հեռ. / tel. /374 99/ 78 87 99; E-mail: armjur@yahoo.com

23.09.2019թ.

ՀՀ արդարադատության փոխնախարար

տիկին Աննա Վարդապետյանին

Հարգելի տիկին Վարդապետյան,

2019թ. օգոստոսի 2-ին էլեկտրոնային փոստով ստացել եմ Ձեր գրությունն (17431-19) ի պատասխան իմ՝ հուլիսի 25-ի, գրությանը: Խնդրում եմ տալ տեղեկատվություն Ձեր պատասխանում նշված աշխատանքների ընթացքի մասին, մասնավորապես.

1. ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում նշված պետական ծառայությունների մատուցման գրասենյակների հասցեների և մատուցվող ծառայությունների ցանկի ճշգրտման ընթացքի վերաբերյալ և օպերատորների պաշտոնական կայքերում մատուցվող ծառայությունների ցանկի և սպասարկող մասնաճյուղերի վերաբերյալ տեղեկատվության թարմացման ընթացքի վերաբերյալ:
2. ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ N 1109-Ն որոշմամբ հաստատված հավելված N 4-ով սահմանված օպերատորի սպասարկման գրասենյակներին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջներով հստակ սահմանված միասնական պետական ծառայությունների տարբերանշանի արտաքին և ներքին գովազդի տեղադրման անհրաժեշտ պայմանի ապահովման իրականացման վերաբերյալ: Եթե օպերատորի կողմից չի կատարվել այդ պահանջը, ապա ինչ հետևանքներ է առաջացրել նրա համար:
3. www.e-request.am հարթակում նշված պետական մարմինների ցանկը Կառավարության կառուցվածքին համապատասխանեցնելու ընթացքի վերաբերյալ:
4. «Տեղեկատվության ազատության մասին», «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում և ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 15–ի N 1204-Ն որոշման մեջ փոփոխությունների կատարման ընթացքի վերաբերյալ, որի արդյունքում հնարավոր կլինի www.e-request.am հարթակի միջոցով էլեկտրոնային հարցումներն ուղարկել առանց քաղաքացիության և էլեկտրոնային ստորագրության պարտադիր պահանջի:

Խնդրում եմ պատասխանն ուղարկել էլեկտրոնային փոստով՝ հասցեին, մինչև սեպտեմբերի 26–ը, քանի որ իրականացվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը թարմացնելու կարիք կա: Կանխավ շնորհակալ եմ համագործակցության համար՝ ի նպաստ վերը նշված ոլորտների զարգացմանը:

Հարգանքով՝

Արման Խաչատրյան
«Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ